

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԽՆԴՐԱՆՔՆԵՐՈՒ  
ԿԱՏԱՐՄԱՆ ԶՕՐԱԻԱՐ ԱՂՕԹՔ Ս.  
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻԷՆ**

Կենդանի Աստուծոյ Որդի, օրհնեալ ամեն բանի մէջ, դուն ահաւոր Հօրը անքննելի ծնունդ: Քեզի համար անկարելի բան չկայ: Երբ քու փառաւոր ներկայութեանըդ անստուեր նշոյլները ծագին մեղքերը կը հալին, դեւերը կը հալածուին, յանցանքները կը ջնջուին, կապանքները կը խզուին, շղթաները կը փշրուին, մահացածները նոր ծնունդով կը կենդանանան, հարուածները կը բժշկուին, վերքերը կ'առողջանան, ապականութիւնը կը վերնայ, տխրութիւնը տեղի կուտայ, հեծութիւնը կը նահանջէ, խաւարը կը փախչի, մշուշը կը մեկնի, մառախուղը կը հեռանայ, մոռայլը կը փարատի, աղջամուղջը կը սպառի, մութը կը վերանայ, գիշերը կը մեկնի, տագնապը կը տարագրուի, չարիքները կը չքանան, յուսահատութիւնը կը հալածուի, անեցքները կը չնչվին, եւ քու ամենակարող ձեռքը կը թագաւորէ, ո վ քաւիչ բոլորին:

Դուն, որ չեկա՛ր մարդոց հոգիները կորսնցնելու, այլ փրկելու, քու անսահման ներողամտութեամբդ ներէ իմ եւ ընտանիքիս անթիւ չարիքները, որովհետեւ միայն դո՛ւն ես երկինքի մէջ անճառելի եւ երկրի վրայ անքըննելի, որ ներկայ ես գոյութիւն ունեցող իւրաքանչիւր տարրի մէջ եւ աշխարհի բոլոր կողմերը. դուն՝ ամեն բանի սկիզբը, ամեն բանի մէջ ներկայ, որ կատարելապէս կ'օրհնաբանուիս բարձունքներուն մէջ: Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին փառք Քեզի՝ յաւիտեան: Ամէն:

**Թագաւոր հօգօր**

Թագաւոր հօգօր, ապաւէն ծարաւելոց, փրկիչ նեղելոց, որ վասն մեր խոնարհեցար ի հայրական ծոցոյ եւ առեր մարմին ի սիրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան, մատնեցար, ըմբոնեցար, չարչարվեցար, խաչեցար եւ թաղեցար եւ յարեար ի մեռելոց, եւ համբարձար փառօք առ Հայր,

զարթո՛ զգօրութիւն քո եւ ե՛կ ի կեցուցանել զգինս արեան քո Տէ՛ր, եւ մի՛ տար գերել սատանայի գքո փրկելալս, եւ մի՛ տար բնակութիւն չարին՝ զտաճար անվանդ քոյ սիրոյ. եւ մի՛ զլքեալս քեզ մարմին եւ անդամ թողուլ ի կոխումն եւ ի կատականս չարին. այլ գթա՛ ի քո արարածս արարչական սիրով.

Տէ՛ր, ողորմեա մեզ, զի ի Խաչ պարծելով պարծեցաք, եւ պահելով պահատեցէ ըզմեզ յերեւելի եւ աներեւոյթ թշնամոյն. եւ լիցի պահապան ծառայիս Աստուծոյ. Ամէն:

**Չար իշխանքն հալածին, Որք ընդ ծառայս քո մարտնչին. Երեւելով նշան Խաչին, Աներեւոյթք կործանեցին: (3X)**

**Պաղատիմք Առ Ս. Խաչն**

Աստուած Ամենակարող որ վասն իմոյ մեղացս մեռար ի վերայ խաչափայտին լեր ընդ իս հանապազ աղաչեմ զՔեզ:

**+ Սուրբ Խաչ Յիսուս Քրիստոսի, Ողորմեա ինձ  
+ Սուրբ Խաչ Յիսուս Քրիստոսի, Ողորմեա ինձ  
+ Սուրբ Խաչ Յիսուս Քրիստոսի, Ողորմեա ինձ**

Հասո զիս զմեղաւորս ի ճանապարհն փրկութեան  
Հասո զիս զմեղաւորս ի ճանապարհն փրկութեան  
Հասո զիս զմեղաւորս ի ճանապարհն փրկութեան

Ազատեա՛ եւ գերծո՛ ի հոգեւոր եւ մարմնաւոր վտանգից:

Ո՛վ Խաչ Յիսուսի Նազովրեցոյ, գոր պաշտեմ յաւիտեան, ողորմեա ինձ եւ հալածեա յինէն զչար ոգին զի ի փախուստ լիցի յինէն յաւիտեան յաւիտենից. Ամէն:

Արտասուալից աչօք ի ծունր իջեալ աղերսեմ ի պատիւ Անգին Արեան Յիսուսի եւ ի պատիւ Իւր մարդէղութեան, որ կարող է առաջնորդել զմեզ ի կեանս յաւիտենականս, եւ գոր խոստովանիմք, եւ հաւատամք յայսմ ճշմարտութեանց այնպէս ինչպէս ստուգապէս Յիսուս Իր Օննդեան օրը ծնաւ, եւ Ուրբաաթ օր մեռաւ. Ամէն: Երկիւղիւ եւ հաւատով յանձնուիլ:

# Armenian Prayers



**Christ Orhniales**  
P.O. Box 280688  
Northridge, CA 91328  
877-373-3781

Web: [www.ChristOrhniales.org](http://www.ChristOrhniales.org)  
EMail: [christorhniales@gmail.com](mailto:christorhniales@gmail.com)

